ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Ահաբեկչական խմբավորումների կողմից իրենց վերահսկողության ներքո գտնվող Իրաքի Հանրապետության տարածքներում եզդի ժողովրդի նկատմամբ 2014 թվականին իրականացված ցեղասպանության դատապարտման մասին» ՀՀ ԱԺ հայտարարության նախագծի ընդունման

Սույն հայտարարության նախագծի ընդունումը պայմանավորված է եզդի ժողովրդի հանդեպ տեղի ունեցած ոճրագործությունը որպես ցեղասպանություն որակելու անհրաժեշտությունից՝ կարևորելով նման ծանր հանցագործությունների համար մեղավորներին պատժելու, դրանք կանխարգելելու և զոհերին հատուցում տրամադրելու խնդիրը:

Ցավալի է, որ վերջին տասնամյակում Իրաքում տեղի ունեցած բազմաթիվ ահաբեկչական հարձակումների մեծ մասը պայմանավորված է կրոնական ատելությամբ և ուղղված է կրոնական փոքրամասնությունների դեմ, մասնավորապես՝ քրիստոնյաների և եզդիների: Դեռևս 2007թ. օգոստոսի 14-ին Սինջարում (Իրաքի հյուսիս) ահաբեկչական հարձակմանը զոհ դարձան ավելի քան 800 եզդի, վիրավորվեցին՝ շուրջ 300 մարդ: 2014 թվականի օգոստոսի 3-ին տեղի ունեցան հարձակումներ եզդիներով բնակեցված Սինջար քաղաքի վրա, որտեղ սպանվեցին ավելի քան երեք հազար մարդ: Սովի, ծարավի և անտանելի շոգի հետևանքով մահացան լեռներում ապաստան գտած մոտ հազար մարդ, ավելի քան 200 հազար եզդիներ դարձան փախստական, առևանգվեցին 13-ից 56 տարեկան շուրջ 5000 կանայք և աղջիկներ: Վերջիններիս կյանքի պահպանման նախապայման է եղել իսլամի ընդունումը և ամուսնությունը ջիհադիստների հետ: Աղբյուրների և արխիվների ուսումնասիրություններն ապացուցում են, որ եզդիների նկատմամբ ցեղասպանություն տեղի է ունեցել ոչ միայն 2014թ. օգոստոսի 3-4-ին, այլ դրանք կրում են շարունակական բնույթ:

Նկարագրված իրավիճակը շատ նման է 1915-23թթ. հայ ժողովրդի նկատմամբ իրականացված ցեղասպանությանը:

Փախստական ու անօթևան դարձած եզդիներին օգնություն ցուցաբերելու պատրաստակամություն, ի թիվս այլ պետությունների, հայտնել է նաև ՀՀ Կառավարությունը, որը ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով կազմակերպեց մարդասիրական օգնության տեղափոխումը համապատասխան բնակավայրեր[1]: Եզդիների նկատմամբ վայրագ գործողությունների կատարման ու անպատիժ մնալու մասին 2014թ. սեպտեմբերին իր մտահոգություններն է

---

[1] Հայաստանի նախագահի հանձնարարությամբ, կառավարությունը ՄԱԿ միջոցով 100.000 ԱՄՆ դոլարի մարդասիրական օժանդակություն է տրամադրել եզդիական բնակավայրերի դեմ ԻԼԻՊ հարձակումների արդյունքում տեղահանվածների կարիքների համար:

ներկայացրել նաև ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը՝ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 69-րդ նստաշրջանում:[2]

Եզդիների հանդեպ կատարված վայրագությունների մասին բազմաթիվ փաստեր է ներկայացրել ՄԱԿ-ի մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը: ՄԱԿ-ը նշել է այն հանգամանքը, որ, ըստ իրենց ունեցած տեղեկությունների, 2014թ. օգոստոսի 24-ից 25-ը ընկած ժամանակահատվածում ԻԼԻՊ-ի գրոհայինների կողմից Շեյխա Մաննա հոգեվոր կենտրոնում գնդակահարվել են եզդի համայնքի թվով 14 ղեկավարներ: ՄԱԿ-ի տվյալների համաձայն, ԻԼԻՊ-ի հարձակումների հետևանքով շուրջ մեկ միլիոն մարդ տեղահանվել և դարձել են աստանդական: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) տվյալների համաձայն՝ 2014թ. օգոստոսի 3-ից 6-ը Սինջարի լեռնային շրջաններում ջրազրկումից մահացել են 250 եզդի երեխա, ևս 25 հազար երեխա, ներառյալ հարյուրավոր ծնող կորցրածները, եղել են մահվան շեմին:

Եզդիների նկատմամբ կատարված գործողությունները դատապարտելու, դրանք ցեղասպանություն որակելու ուղղությամբ իրենց արձագանքն ու կոշտ գնահատականներն են տվել մի շարք պետություններ և միջազգային հեղինակավոր կազմակերպություններ:

Մասնավորապես՝ ԵԽԽՎ-ն 27.01.2016թ. ընդունել է բանաձև, որում ասվում է. «Վերջին ահաբեկչական հարձակումներից շատերը վկայում են և կարող են վերագրվել այն անձանց, ովքեր հանդես են գալիս ահաբեկչական մի կազմակերպության անունից, որն իրեն անվանում է «Իսլամական պետություն» (ԴԱԵՇ) և, որը կատարած ցեղասպան գործողությունների և այլ հանցագործությունների համար պետք է պատիժ կրի միջազգային իրավունքի համաձայն...»:

ԱՄՆ Ներկայացուցիչների պալատը 2016թ. մարտի 14-ին միաձայն ընդունել է բանաձև՝ հայտարարելով, որ Իրաքի և Սիրիայի իսլամական պետության կողմից քրիստոնյաների, եզդիների և այլ կրոնական և էթնիկ փոքրամասնությունների դեմ իրականացվող վայրագությունները ռազմական հանցագործություններ են:

Մեծ Բրիտանիայի համայնքների պալատը 2016 թվականի ապրիլի 20-ին միաձայն ընդունել է հայտարարություն, որում ասվում է. «Այս Պալատը կարծում է, որ քրիստոնյաները, եզդիները և Իրաքում ու Սիրիայում ապրող այլ էթնիկ և կրոնական փոքրամասնությունները կրում են Ցեղասպանության հետևանքները, և կոչ է անում կառավարությանն անհապաղ ուղերձ հղել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին՝ համապատասխան իրավասություն տրամադրելու համար»:

Կանադայի Համայնքների Պալատը, իսկ այնուհետև Արտաքին գործերի նախարար Ստեֆան Դիոնը 2016թ ապրիլի 16-ին հայտարարեցին, որ եզդիների դեմ ցեղասպանությունը ներկայումս շարունակվում է, և որ Պալատը գիտակցում է, որ ԻԼԻՊ-ի կողմից եզդի ժողովրդի դեմ իրագործվածը ցեղասպանություն է:

Ֆրանսիայի Սենատը 2016թ. դեկտեմբերի 6-ին միաձայն ընդունեց բանաձև՝ ճանաչելով ԴԱԵՇ-ի կողմից եզդիների նկատմամբ իրականացված գործողությունները որպես ցեղասպանություն՝ միաժամանակ կոչ անելով Ֆրանսիայի Կառավարությանը ճանաչել այն:

---

[2] Ելույթն ամբողջապես հասանելի է http://www.president.am/hy/press-release/item/2014/09/24/President-Serzh-Sargsyan-New-York-speech/ կայք էջում:

Իրաքում կատարվածը որպես միջազգային իրավունքի նորմերի խախտում է որակել և մարդու իրավունքների դեմ ուղղված հանցագործությունների համար պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտության մասին է նշել նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2170 (2014) բանաձևը:

Անհրաժեշտ է ընդգծել, որ Սինջար քաղաքում տեղի ունեցած ոճրագործությանն անդրադարձել է նաև համաշխարհային մամուլը (BBC, Sky News և այլ գործակալություններ), ինչպես նաև միջազգային տարբեր ոչ կառավարական իրավապաշտպան կազմակերպությունները:

Հարկ է նշել նաև, որ Հայաստանի Խորհրդարանը եզդիների նկատմամբ կատարված ցեղասպանությունը դատապարտելու ուղղությամբ քայլեր սկսել է ձեռնարկել 2015 թվականից սկսած: Մասնավորապես, հինգերորդ գումարման ԱԺ պատգամավորներ Նաիրա Զոհրաբյանի, Վահե Էնֆիաջյանի, Թևան Պողոսյանի և մի շարք այլ պատգամավորների նախաձեռնությամբ շրջանառության մեջ է դրված եղել համանման նախագիծ:

Ժամանակակից գիտատեխնիկական միջոցների հագեցվածության, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացվածության մակարդակի պայմաններում, կատարված բոլոր գործողությունները արտացոլված են ոչ միայն լուսանկարների տեսքով, այլ նաև տեսաձայնագրությունների, որոնց վրա պատկերված են եզդիների սպանության և հարկադիր կրոնափոխության տեսարանները և որոնք, որպես անհերքելի, հանրահայտ փաստեր, էլ ավելի են հնարավորություն տալիս համաշխարհային հանրությանը կատարելու համապատասխան հետևություններ: